ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արևիկ Անափիոսյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Ստրասբուրգ, Ֆրանսիա Հունիս 1-2, 2019

4. Հրավիրող Կողմը

Եվրոպայի Խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Եվրոպայի Խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտոի նիստի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված Թեմաները

- Ժողովրդավարական մշակույթի կարողությունները,
- Բարձրագույն կրթության ժողովրդավարական առաքելությունները,
- Բարձրագույն կրթության բարեփոխումներն ու որակավորումները,
- Թվային քաղաքացիության կրթություն,
- Լեզվի քաղաքականություն և փորձառնություն կրթական ծրագրում,
- Փախստականների / միգրանտների / խոցելի խմբերի կրթության տրամադրում,
- «Ազատ խոսել, անվտանգ սովորել, բոլորի համար ժողովրդավարական դպրոցներ»,

- Էթիկայի, թափանցիկություն և ինտեգրում ուսման մեջ:

7. Հանդիպումները, Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ելույթներ՝

- ԿԳՄՄՆ տեղական կողմից ներկայացվել է կրթության չափորոշիչների մշակմանը միտված մայիսի 30-ից հունիսի 1-ը տեղի ունեցած աշխատաժողովի ընթացքում ԵԽ փորձագետի ունեցած ներդրումը՝ կոմպետենցիաներիԵԽ շրջանակը մասնակիցների հետ քննարկելու և կրթական ծրագրեր ինտեգրելու շուրջ:
- Հանդիպման ժամանակ տեղի ունեցած ոլորտային քննարկումների ձևաչափի համաձայն, ելույթի միջոցով քննարկվել են պիլոտային ծրագրերի վերլուծությունները, Քարտուղարությունը Բյուրոյին զեկուցել է ETINED ծրագրի իրականացման հետ կապված զարգացումների վերաբերյալ, ինչպիսիք են կրթության խարդախությունների դեմ պայքարի մասին ETINED աշխատանքային խմբի դիրքորոշումը: Հանդիպման ժամանակ քննարկվել են կարևոր խնդիրներ, որոնց հարկ են համարել անդրադառնալ հաջորդ հանդիպումների ընթացքում: Հայկական կողմի առաջարկները նույնպես ներգրավվել են հետագա քննարկամն ենթակա թեմաների ցանկում: Քննարկվել են նաև «Ժողովրդավարության առկայությունը» գիտաժողովի արդյունքները որը տեղի էր ունեցել հունիսի 6-7-ն ընկած ժամանակահատվածում, Աթենքում:

Հանդիպումներ և բարձրացված հարցեր՝

- Կայացել է հանդիպում Կատիա Դոլգովայի հետ, ով ԵԽ-ում համակարգում է կրթական ծրագրերի մի քանի ոլորտներ: Հանդիպման ժամանակ քննարկված հարցերի արդյունքում ձեռք են ԵԽ փորձագետների հայաստան այցի և նրանց՝ չափորոշիչների մշակման ընթացքում աջակցության վերաբերյալ համաձայնություններ
- Կայացել է հանդիպում Սարա Քիթինգի հետ, ով հանդիսանում է կրթության ոլորտում ծրագրերի և կարողությունների զարգացման պատասխանատու:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Կատիա Դոլգովայի հետ հանդիպման ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն, համաձայն որի ԵԽ-ի կողմից տրամադրված երկու փորձագետները չափորոշիչների մշակման թիմի հետ կիրականացնեն «Ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաները» աշխատաժողովը, որի արդյունքում ներկայացված նկարագրականները կընդգրկվեն առարկայական չափորոշիչներում և ծրագրերում: Չափորոշիչների մշակման ընթացքում փորձագետները կաջակցեն թիմերին աշխատանքների իրականացմանը:

Սարա Քիթինգի հետ հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ԵԽ-ից միջազգային փորձագետի տրամադրման վերաբերյալ՝ բարձրագույն կրթության և գիտահետազոտությունների մասին օրենքը վերջնական տեսքին բերելու նպատակով; Փորձագետը, որը կաջակցի վերոնշյալ հարցում նախկինում եղել և աշխատել է Հայաստանի Հանրապետությունում, ուստի ծանոթ է համատեքստին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը. ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Բյուրոյի ժամանակ քննարկումների ընթացքում հայկական կողմի առաջարկությունները ընդգրկվել են գալիք բյուրոյի քննարկման օրակարգում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

08.07.2019